Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

01.11.2021թ. ք. Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի պետական բյուջեի օգտին բռնագանձումների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Լևոն Սիմոնյանս՝ ուսումնասիրելով հարուցված թիվ 08152641 կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ՊԵԿ-ի կողմից կայացած թիվ 47617-1 Ա որոշման համաձայն պետք է «ՓԱՐԹ ՄՄ» ՍՊԸ-ից հօգուտ պետ. բյուջեի բռնագանձել 191.418.947 ՀՀ դրամ, ինչպես նաև պարտապանից բռնագանձել բռնագանձման ենթակա գումարի 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների ընթացքում արգելանք է կիրառվել <<ՓԱՐԹ ՄՄ>> ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող KIA CERATO 1.6 մակնիշի, նույնականացման համար KNAFU411BC5579504, 551 UN 55 պետ համարանիշի տրանսպորտային միջոցը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 և 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան «ՓԱՐԹ ՄՄ» ՍՊ ընկերությանը պատկանող ներքոհիշյալ գույքը.

/Հ	Լոտիանվանումը, նկարագիր	Գնահատման գինը	Մեկնարկային գինը (75%)	Գույքի քանակը
1	KIA CERATO 1.6 մակնիշի, նույնականացման համար KNAFU411BC5579504, 551 UN 55 պետ համարանիշի տրանսպորտային միջոց	2.400,000 ՀՀ դրամ	1.800,000 ՀՀ դրամ	1 հատ

ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ 09.12.2021թ.: